ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1963 Общественные науки

Հ. Ա. Պետրոսյան

ԲԱՔՎԻ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՌԱԶՄԱ-ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԴԵՄ

Առաջին համաշխարհային պատերազմի մղձավանջային տարիներին (1915—1917 թթ.) ռազմա-արդյունաբերական կոմիտեների դեմ Բաքվի բոլշևիկների մղած պայքարը՝ իմպերիալիստական պատերազմի, ցարական ինքնակալության, բուրժուազիայի ու սոցիալ-շովինիստների դեմ մեր պարտիայի և մասնավորապես Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պայքարի պատմության ամենափայլուն էջերից մեկն է։ Սակայն այդ հարցը մինչև այժմ դեռևս պատշաճ կերպով չի լուսաբանված։ Եթե դրան ավելացնենք նաև այն, որ Բաքվի բոլշևիկյան կազմակերպության աշքի ընկնող բազմաթիվ գործիչների՝ այդ ուղղությամբ կատարած աշխատանքը թերագնահատվել, կամ բոլորովին անտեսվել է, ապա հասկանալի է, որ ռազմա-արդյունաբերական կոմիտեների ակտիվ բոյկոտի լենինյան տակտիկայի կենսագործման համար Բաքվի բոլշևիկների պայքարի պատմության ուսումնասիրությունը, մեր պատմագիտության կարևոր խնդիրներից մեկն է հանդիսանում։

Սույն հոդվածում փորձ է արվում արխիվային հարուստ նյութերի և բազմաթիվ այլ աղբյուրների հիման վրա շարադրել այդ պայքարի համառոտ պատմությունը։

* * *

1915 թ. մայիսին, առևտրի և արդյունաբերության ներկայացուցիչների համառուսաստանյան 9-րդ համագումարում, ռուսական իմպերիալիստական բուրժուազիան, ահաբեկված ցարական զորքերի ռազմաճակատում կրած պարտություններից և երկրի ներսում օրեցօր աճող ռևոլյուցիոն շարժման վերելքից, որոշում ընդունեց ռազմա-արդյունաբերական կոմիտեներ ստեղծելու մասին։ Ռուսաստանում ստեղծվեցին 244 մարզային և տեղական այդպիսի կոմիտեներ։ Ռազմա-արդյունաբերական կոմիտեներ ստեղծվեցին նաև Կովկասի գրեթե բոլոր շատ թե քիչ կարևոր նշանակություն ունեցող վայրերում՝ Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Քութայիսում, Կարսում, Բաթումիում, Ալեքսանդրապոլում, Գորիում, Սուխումիում, Նլիղավետպոլում, Նախիջևանում, Շուշիում, Ղարաքիլիսայում և այլն։

Ռազմա-արդյունաբերական կոմիտեների միջոցով բուրժուազիան ցանկանում էր իր ձեռքը վերցնել երկրի ամբողջ արդյունաբերությունը պատերազմի համար մոբիլիզացնելու գործը, ռազմական մատակարարումների և բանվոր դասակարգի շահագործումը ուժեղացնելու հաշվին՝ ստանալ հսկայական շահույթներ, ամրապնդել իր դիրքերը երկրի քաղաքական կյանքում և, վերջապես, այդ կոմիտեներին կից «բանվորական խմբեր» ստեղծելու միջոցով «ապահովել»

պրոլետարիատի ու բուրժուազիայի «դասակարգային հաշտությունը», վարձու ստրկությունը։

Պարզ է, որ ռուսական իմպերիալիստական բուրժուազիայի այս ձգտումները լուրջ վտանգ էին ներկայացնում ռևոլյուցիոն շարժման համար։

Դա ավելի վտանգավոր էր դառնում մենշևիկների և էսեռների դավաճանության շնորհիվ, որոնք բացահայտորեն արտահայտվեցին հօգուտ պատերազմի ժամանակ դասակարգային պայքարը դադարեցնելուն և պատերազմում ցարական կառավարությանը աջակցելուն։ Մենշևիկներն ու էսեռները բանվորներին կոչ էին անում մտնել ռազմա-արդյունաբերական կոմիտեների մեջ, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, հեռու մնալ գործադուլներից, դասակարգային պայքարից։

Այդպիսի պայմաններում բոլշևիկների պարտիան ստիպված էր վճռական պայքար մղել ոչ միայն ցարիզմի ու բուրժուազիայի դեմ, այլև՝ բանվորական շարժման ներսում բուրժուազիայի գործակալները հանդիսացող մենշևիկների, էսեռների և ամեն երանգի սոցիալ-շովինիստների դեմ։

Նշելով մասսաներին դեպի ռևոլյուցիա առաջնորդելու գործում անլեգալ կազմակերպությունների հսկայական նշանակությունը, Վ. Ի. Լենինը պարտիայից պահանջում էր՝ ոչ մի դեպքում և ոչ մի պարագայում չհրաժարվել մասսաները կազմակերպելու և սոցիալիզմ յարոզելու համար ամենափոքր լեգալ հնարավորությունները օգտագործելուց[1]։

Պատերազմի ժամանակ ռազմա-արդյունաբերական կոմիտեների «բանվորական խմբերի» ընտրական կամպանիան բոլշևիկների համար գրեթե միակ լեգալ հնարավորությունն էր բանվորական լայն մասսաների առաջ հանդես գալու համար, ուստի և նրանք օգտագործեցին այդ հնարավորությունը, որպեսզի շարադրեն իրենց հայացքները պատերազմի, խաղաղության ու ռևոլյուցիայի հարցերի մասին, մերկացնեն պաշտպանողականներին, սոցիալ-շովինիստներին և գալիք ռևոլյուցիոն մարտերի համար կոփեն ու կազմակերպեն բանվոր դասակարգին, բոլոր աշխատավորներին։

«Մենք դեմ ենք,—գրում էր Վ. Ի. Լենինը,—ռազմա-արդյունաբերական կոմիտեներին մասնակցելուն, որոնք օգնում են մղելու իմպերիալիստական, ռեակցիոն պատերազմ։ Մենք կողմնակից ենք ընտրական կամպանիան օգտագործելուն, օրինակ, կողմնակից ենք միմիայն ագիտացիոն ու կազմակերպական նպատակներով ընտրությունների առաջին աստիճանին մասնակցելուն»[2]։

Ռազմա-արդյունաբերական կոմիտեների ակտիվ բոյկոտի լենինյան այս տակտիկան դարձավ Ռուսաստանի, այդ թվում նաև Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության ուղեցույցը։ Ռազմա-արդյունաբերական կոմիտեների «բանվորական խմբերի» ընտրությունները Անդրկովկասում տեղի ունեցան 1916 թ.։ Անդրկովկասի տիրապետող դասակարգերը, ցարական ադմինիստրացիան ընտրությունները ուշացնում էին, որպեսզի ավելի շատ ժամանակ ունենան բոլշևիկների ու առաջավոր բանվորների հետ «դատաստան» տեսնելու և բանվորների դասակարգային գիտակցությունը մթագնելու համար։

---

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատոր 21, Հայպետհրատ, Երևան, 1950, էջ 248։

2 Տե՛ս Նույն տեղում, էջ 510։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպության ակտիվ գործիչներից մեկը՝ Ֆ. Մախարաձեն իր հիշողություններում նշում է, որ ռազմա-արդյունաբերական կոմիտեների և այդ կոմիտեների «բանվորական խմբերի» ստեղծման շրջանում, Անդրկովկասի բոլշևիկների ու մենշևիկների միջև մղվող անհաշտ պայքարը նոր թափ ստացավ[3]։ Այն ժամանակ, երբ բոլշևիկները բանվորական մասսաների մեջ ագիտացիա ծավալեցին իմպերիալիստական պատերազմի ու ցարական ինքնակալության դեմ, ռազմա-արդյունաբերական կոմիտեների և այդ կոմիտեներին կից «բանվորական խմբեր» ստեղծելու բուրժուական քաղաքականության դեմ, մենշևիկները, հետևողականորեն շարունակելով դավաճանական քաղաքականությունը, իրենց 1915 թ. հոկտեմբերյան խորհրդակցությունում որոշում ընդունեցին «երկիրը թշնամու արշավանքից պաշտպանելու» և «ռազմա-արդյունաբերական կոմիտեներին մասնակցելու մասին»[4]։

Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետ գնդապետ Պաստրյուլինը, ներքին գործերի մինիստրության ոստիկանության դեպարտամենտին ուղղած իր 1915 թ. նոյեմբերի 1-ի զեկուցագրում, խոսելով Կովկասի մենշևիկների վերոհիշյալ խորհրդակցության մասին, գրել է, որ «...հոկտեմբերի 4-ի խորհրդակցությունում, պաշտպանության իդեան, որին կողմնակից է «Ան»-ը (Ն. Ժորդանիան—Հ. Պ.) հաղթանակեց, որի պերճախոս ապացույցն է ռազմա-արդյունաբերական կոմիտեներին մասնակցելու վերաբերյալ խորհրդակցության ընդունած որոշումը»[5]։ Այնուհետև Պաստրյուլինի զեկուցագրում ասվում է, որ երբ խորհրդակցության այդ որոշմանը համաձայն, մենշևիկների օրգան «Աղբին» («Միտքը») բացահայտորեն հայտարարեց, որ «սոցիալ-դեմոկրատները պետք է բոլոր միջոցներով պաշտպանեն հայրենիքը թշնամու նվաճումից», ապա Կովկասի նացիոնալիստներն իրենց մամուլում հայտարարեցին Ինտերնացիոնալի կրախի և նացիոնալիզմի հաղթանակի մասին, ծավալեցին նացիոնալիստական լայն կամպանիա, ավելացրին իրենց թերթերի թիվը, Թիֆլիսում հրատարակելով «Զվիրթի» («Ալիք»), իսկ Քութայիսում՝ «Մեգոբարի» («Բարեկամ») թերթերը։

Ինչպես տեսնում ենք, մենշևիկների դավաճանությունը մեծ հիացմունք էր պատճառել նացիոնալիստներին և ցարական ժանդարմերիային։ Պատահական չէր, որ նրանք օգտվում էին լեգալ մամուլից ու գործունեության այլ ազատություններից, որոնցից զրկված էին բոլշևիկները։ Օգտվելով այդ ազատություններից, Կովկասի մենշևիկները բանվորների մեջ սոցիալ-շովինիստական լայն ագիտացիա ծավալեցին, պահանջելով դադարեցնել դասակարգային պայքարը և մտնելով ռազմա-արդյունաբերական կոմիտեների մեջ՝ օժանդակել ցարական բանակի հաղթանակին։ Մենշևիկներն էլ ավելի հեռու գնացին։ Նրանք իրենց մամուլի էջերում բոլշևիկների վրա հարձակվեցին, հանդես եկան նրանց անլեգալ գործունեության դեմ և սկսեցին խոչընդոտել, իմպերիալիստական պատերազմի ու ցարական ինքնակալության դեմ ուղղված, բոլշևիկյան կոչերի ու թռուցիկների տարածմանը։ Ինչպես նշել է Մ. Օրախելաշվիլին, Անդրկովկասի բոլշևիկներն այդ ժամանակ ստիպված էին զգուշանալ ոչ միայն ցարական ոստիկաններից, այլ նաև մենշևիկներից։

---

3 Տե՛ս ՄԼԻ-ի Վրացական ֆիլիալի Կենտրոնական պարտիական արխիվ, ֆ. 2914, գ. 262։
4 Մոսկվայի ԿՊՊՍ, ֆ. 102, Ո. Դ., Հ. Բ., 1915, գ. 5, մաս 39, լիտեր «ր», թ. թ. 5—6։
5 Նույն տեղում։

Կ. Ցինցաձեն իր հիշողություններում գրում է, որ երբ մենշևիկներին հայտնի դարձավ, որ բոլշևիկները տպագրել և տարածում են Ցիմմերվալդյան ձախ խմբի մանիֆեստն ու բանաձևերը, ապա նրանք բոլշևիկներից պահանջեցին վերջ տալ անլեգալ աշխատանքին, այրեցին իրենց ձեռքն ընկած բոլշևիկյան թռուցիկները և սկսեցին փնտրել բոլշևիկների գաղտնի տպարանը, որպեսզի խափանեն նրանց անլեգալ աշխատանքը[5]։

Մեր պարտիայի կենտրոնական օրգան «Սոցիալ-դեմոկրատ»-ը, 1916 թ. փետրվարի 29-ին բնութագրելով Կովկասում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները, նշել է, որ մենշևիկներն ու վրացական «սոցիալիստ-ֆեդերալիստները» լեգալ մամուլի էջերում հարձակում են սկսել բոլշևիկների վրա «այն բանի համար, որ նրանք հանդես են գալիս Պլեխանովի դեմ, որ նրանք խարազանում են գերմանական սոցիալ-հայրենասերներին այն բանի համար, որ նրանք դեմ են ռազմա-արդյունաբերական կոմիտեներին... բանվորների մասնակցությանը և այլն»[7]։

Չնայած նրան, որ Կովկասի մենշևիկները ցանկանում էին բանվորների մասնակցությունը ռազմա-արդյունաբերական կոմիտեներին «հիմնավորել» «աշխատանքի պայմանների բարելավման», «բանվորների կազմակերպման», «քաղաքական շարժման ընդլայնման» և այլ կեղծ ֆրազներով, այնուամենայնիվ նրանց չհաջողվեց խաբել Անդրկովկասի պրոլետարիատին։ Չհաջողվեց, որովհետև պատերազմական դրության ծանր պայմաններում, երբ, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, մեր պարտիայի աշխատանքը 100 անգամ ավելի դժվար էր դարձել՝, Անդրկովկասի բոլշևիկներն իրենց անլեգալ հրատարակությունների և բանվորների, աշխատավոր մասսաների մեջ տարվող բանավոր ագիտացիայի միջոցով անհաշտ պայքար ծավալեցին իմպերիալիստական պատերազմի և ցարական ինքնակալության դեմ, աշխատավոր մասսաների դասակարգային գիտակցությունը մթագնող բուրժուա-նացիոնալիստական ու սոցիալ-շովինիստական պարտիաների դեմ, ռազմա-արդյունաբերական կոմիտեներում «բանվորական խմբեր» ստեղծելու միջոցով, պրոլետարիատի հետ «դասակարգային հաշտություն» հաստատելու բուրժուազիայի փորձի դեմ։ Ղեկավարվելով պատերազմի, ռևոլյուցիայի և խաղաղության հարցերի մասին լենինյան հանճարեղ դրույթներով՝ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների 1915 թ. Բաքվում կայացած, հոկտեմբերյան խորհրդաժողովը վճռականորեն դատապարտեց բանվորների մասնակցությունը ռազմա-արդյունաբերական կոմիտեներին։ «Երկրի պաշտպանությանը մասնակցելու վերաբերյալ այն կոչերի առթիվ,—ասվում է խորհրդակցության ընդունած «Ընթացիկ մոմենտի մասին» բանաձևում,— որ ուղղված են բանվորներին... մենք գտնում ենք, որ որևէ համագործակցություն ժողովրդին և բանակին դավաճանած ու վաճառած ցարական կառավարության հետ—քմեարկություն ռազմական վարկերի օգտին, մասնակցություն ռազմա-արդյունաբերական կոմիտեներին և այլն—անթույլատրելի է բանվորների համար, որովհետև այդ բոլորը երկրի իսկական պաշտպա-

---

[6] М. Орахелашвили, Закавказские организации в 1917 г., Тифлис, 1927, стр. 31.

[7] «Социал-демократ», № 59, 29 февраля 1961.

[8] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր. հատոր 35, էջ 179.

նության իմաստով ոչ մի օգուտ չի կարող բերել և, ընդհակառակը, կարող է ծառայություն մատուցել ցարական կառավարությանը»[9]։

ՌՍԴԲՊ բոլշևիկների Կովկասյան բյուրոն, իր 1916 թ. մայիսմեկյան թռուցիկում, ևս մեկ անգամ մերկացնելով առաջին համաշխարհային պատերազմի իմպերիալիստական բնույթը, դատապարտում էր բանվորների մասնակցությունը ռազմա-արդյունաբերական կոմիտեներին և դարձյալ ու դարձյալ հիշեցնում, որ ցարական կառավարությունը բանվորներին ռազմա-արդյունաբերական կոմիտեներ է կանչում, միլիոնավոր գյուղացիների ու բանվորների պատերազմի ռազմադաշտ է նետում միմիայն նրա համար, որ ամրապնդի երերվող գահը և ընդլայնի ռուսական բուրժուազիայի շուկաները[10]։

Անդրկովկասի բոլշևիկները իմպերիալիստական պատերազմի ու ցարական ինքնակալության, բուրժուազիայի ու սոցիալ-շովինիստների դեմ մղվող պայքարում, աշխատավորական լայն մասսաների մեջ տարվող բանավոր ագիտացիայից բացի, իրենց անլեգալ տպարաններում տպագրվող ու տարածվող կոչերից, թռուցիկներից ու բրոշյուրներից բացի օգտագործեցին նաև պատերազմի տարիներին Անդրկովկասում լույս տեսնող միակ ինտերնացիոնալիստական, ռևոլյուցիոն-դեմոկրատական ուղղություն ունեցող «Պայքար» թերթը և նույնիսկ որոշ հաշտվողական թերթեր, ինչպես, օրինակ, 1915—1916 թվականներին Քութայիսում հրատարակվող «Ախալի կվալի» («Նոր ակոս») թերթը։ Այդ թերթերի էջերից բոլշևիկները, մերկացնելով մենշևիկների տակտիկան, պարզաբանում էին բանվորներին, որ ռազմա-արդյունաբերական կոմիտեները ծառայում են կապիտալիստների շահերին, որ այդ իսկ պատճառով նրանք երբեք չեն կարող դառնալ բանվոր դասակարգի շահերի արտահայտիչը, նրա ձգտումների պաշտպան, ուստի և բանվորները չեն կարող մտնել այդ կոմիտեների մեջ։

Անդրկովկասի բոլշևիկները, ՌՍԴԲՊ բոլշևիկների Կովկասյան բյուրոյի (որի կազմի մեջ էին մտնում Ստ. Շահումյանը, Ֆ. Մախարաձեն, Ի. Ֆիոլետովը, Ս. Քավթարաձեն, Մ. Օրախելաշվիլին, Վ. Ալաջալովան և ուրիշներ) գլխավորությամբ, ռազմա-արդյունաբերական կոմիտեների «բանվորական խմբերի» ընտրական կամպանիան օգտագործեցին՝ պրոլետարիատի հետ «դասակարգային հաշտություն» հաստատելու բուրժուազիայի փորձը տապալելու, բանվորական լայն մասսաների առաջ համաշխարհային պատերազմի իմպերիալիստական, ռեակցիոն բնույթը բացահայտելու, բուրժուազիայի ու սոցիալ-շովինիստների դաշինքը մերկացնելու, բանվորների ու աշխատավոր գյուղացիների դասակարգային գիտակցությունը բարձրացնելու, լենինյան լոզունգների շուրջը նրանց համախմբելու և իմպերիալիստական պատերազմի ու ցարական ինքնակալության դեմ մղվող ռևոլյուցիոն պայքարը կազմակերպելու համար։

Անդրկովկասում ռազմա-արդյունաբերական կոմիտեներին կից «բանվորական խմբեր» ստեղծելու շուրջը, բուրժուազիայի ու սոցիալ-շովինիստների միացյալ բլոկի և բոլշևիկների միջև հատկապես սուր պայքար տեղի ունեցավ Անդրկովկասի արդյունաբերական խոշորագույն կենտրոն Բաքվում։ Բաքվի բոլշևիկները, ՌՍԴԲՊ բոլշևիկների Կովկասյան բյուրոյի գլխավորությամբ, ռազմա-արդյունաբերական կոմիտեների «բանվորական խմբերի» ընտրությունը-

[9] Ս. Դ. Շահումյան, Երկեր, հատոր 2, Հայպետհրատ, Երևան, 1957, էջ 354։
[10] Մոսկվայի ԿՊՊԱ, ֆ. 102, Ո. Դ., Հ. Բ., 1916, գ. 101, հատոր 1, թ. 124։

ներից դեռ շատ առաջ, հսկայական աշխատանք տարան բանվորների դասակարգային գիտակցությունը բարձրացնելու, նրանց ռևոլյուցիոն պայքարը կազմակերպելու ու միավորելու և ռազմա-արդյունաբերական կոմիտեներն ակտիվ բոյկոտի ենթարկելու ուղղությամբ։

1915 թ. նոյեմբերի 11-ին[11] Բաքվի բոլշևիկների կոմիտեն որոշում է ընդունում Բաքվի նավթարդյունաբերական շրջանի բանվորների ընդհանուր պահանջների մշակման մասին։ Այդ նպատակով Բաքվի կոմիտեի ցուցումով նավթահանքերում ու գործարաններում ստեղծվեցին բանվորական անլեգալ հանձնաժողովներ, որոնք դարձան բանվորների մեջ բոլշևիկների կողմից տարվող մասսայական, քաղաքական աշխատանքի հենարանները։ 1915 թ. վերջին բոլշևիկները կազմակերպեցին և անցկացրին բանվորական այդ հանձնաժողովների մի քանի գաղտնի ժողովներ, որոնցում քննարկվեցին Բաքվի կոմիտեի անդամների և բանվորների ներկայացուցիչների համատեղ մշակած այն պահանջները, որոնք Բաքվի ողջ պրոլետարիատի անունից պետք է ներկայացվեին 1915 թ. նոյեմբերի 30-ին բացվող Բաքվի նավթարդյունաբերողների 34-րդ համագումարին։

1915 թ. դեկտեմբերի առաջին իսկ օրերին Ստ. Շահումյանը, Յ. Ջեվինը, Ա. Ռոխլինը[12] Բաքվի պրոլետարիատի անտանելի դրության մասին կազմում են հայտարարություն, որը բանվորների 68 ներկայացուցիչների ստորագրությամբ, հանձնվում է նավթարդյունաբերողների 34-րդ համագումարին։ Համագումարը հրաժարվում է քննարկել այդ հայտարարությունը։ Ուստի բանվորական հանձնաժողովները բոլշևիկների գլխավորությամբ բանվորների մեջ լայն ագիտացիա են ծավալում հանուն Բաքվի ողջ պրոլետարիատի ընդհանուր գործադուլի։ 1916 թ. հունվարին նավթահանքերի ու գործարանների հանձնաժողովների գործունեությունը միավորելու և կենտրոնացնելու նպատակով այդ հանձնաժողովների ներկայացուցիչների ժողովում ստեղծվում է կենտրոնական հանձնաժողով[13], որը և դառնում է Բաքվի պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի մարտական շտաբը։ Կենտրոնական հանձնաժողովի գործունեությունը ղեկավարում էր Բաքվի բոլշևիկների կոմիտեն։ 1916 թ. հունվարին Յ. Ջեվինի և Ա. Ռոխլինի մասնակցությամբ տեղի է ունենում Կենտրոնական հանձնաժողովի գաղտնի ժողովը, որը Բաքվի նավթարդյունաբերողներին ներկայացվող նոր հայտարարության քննարկումից բացի, քննարկում է նաև ռազմա-արդյունաբերական կոմիտեներում բանվորների մասնակցություն ունենալու և «բանվորական խմբերի» ընտրությունների կապակցությամբ ընտրական պլատֆորմ մշակելու հարցերը։

Բաքվի նահանգի ժանդարմական վարչության պետի պաշտոնակատար փոխգնդապետ Սևերինովսկու 1916 թ. մարտի 18-ի ներքին գործերի ոստիկանության դեպարտամենտի դիրեկտորին ուղղված զեկուցագրում նշվում է, որ «Ռոխլինը ժողովում ուսիերատ կարդաց ռազմա-արդյունաբերական կոմիտեների նշանակության և նրանցում բանվորների մասնակցության մասին և դրանով դրաղեցրեց գրեթե ողջ երեկոն... ելույթ ունեցավ նաև Պավել Կուզմինը (Յ. Դ. Ջեվինը—Հ. Պ.)»[14]։ Ամենուհետև նա հայտնում է, որ հետագա գաղտնի

11 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 2, գ. 4484, թ. 67։
12 Մոսկվայի ԿՊՊԱ, Ո. Դ., Հ. Բ., 1915, գ. 5, մաս 6, թ. 13։
13 Նույն տեղում, թ. 14։
14 Մոսկվայի ԿՊՊԱ, ֆ. 102, Ո. Դ., Հ. Բ., 1915, գ. 5, մաս 6, թ. 13։

ժողովների համար տեղ որոշելու և Կենտրոնական հանձնաժողովի անդամներին այդ մասին հայտնելու նպատակով, ժողովում ստեղծվեց «Կազմակերպական հանձնաժողով», որի կազմի մեջ մտան Վ. Ն. Գուրանովը, Պ. Յ. Մալինինը, Մ. Դ. Ստեպանովը, Մ. Մ. Վարնաչովը (բոլորը բոլշևիկներ, ընդ որում Վ. Գուրանովը և Մ. Վարնաչովը՝ Բաքվի կոմիտեի անդամներ.—Հ. Պ.)։ Նախքան ընտրությունները ՌՍԴԲՊ Բաքվի բոլշևիկների կոմիտեն, Ս. Դ. Շահումյանի գլխավորությամբ, մշակում է այն հայտարարության տեքստը, որը պետք է ընթերցվեր ռազմա-արդյունաբերական կոմիտեների «բանվորական խմբերի» նախընտրական ու ընտրական ժողովներում։ Բաքվի բոլշևիկներն այդ հայտարարության մեջ մերկացնելով ցարական կառավարության և բուրժուազիայի իմպերիալիստական, կոնտրռևոլյուցիոն քաղաքականությունը, բացահայտելով ռազմա-արդյունաբերական կոմիտեների և դրանց կից ստեղծվող «բանվորական խմբերի» իսկական նշանակությունը, բանվորներին կոչ էին անում բոյկոտի ենթարկել ռազմա-արդյունաբերական կոմիտեները։ Բաքվի նավթարդյունաբերական շրջանի բանվորների մեծամասնությունը գնում էր բոլշևիկների հետևից։ Այդ իսկ պատճառով ժանդարմերիայի, նավթարդյունաբերողների, ցարական ադմինիստրացիայի և սոցիալ-շովինիստների միացյալ բլոկը ձեռնարկեց հնարավոր բոլոր միջոցները, որպեսզի թույլ չտա, որ բանվորներն իրենց ցանկացած թեկնածուներին պատվիրակներ ընտրեն։ Բաքվի մարզային և Բալախանիի տեղական ռազմա-արդյունաբերական կոմիտեներին կից «բանվորական խմբերի» ընտրությունների նախընտրական կամպանիան սկսվեց 1916 թ. փետրվարի կեսերին։ Բանվորները դեռ նոր էին սկսել (այն էլ միայն առանձին տեղերում) քննարկել պատվիրակների թեկնածությունները և գալիք ընտրությունների կապակցությամբ որոշել իրենց աշխատանքների բնույթը, երբ 1916 թ. փետրվարի 14-ին Բաքվում սկսվեցին, սովից ու աղքատությունից հուսալքված մասսաների, գլխավորապես կանանց, ինչպես նաև զինվորների և նավաստիների, հուզումները։ Սովի ճիրաններում տառապող մասսաները, 3 օր շարունակ ավերում էին խանութներն ու մթերային պահեստները։ Մասսաների հետ դատաստան տեսնելու համար ցարական կառավարությունը Բաքվում արտակարգ դրություն է հայտարարում և Գյանջայից, Պետրովսկուց ու Թեմիրխան-Շուրայից շտապ կերպով զորքեր է փոխադրում Բաքու, որոնք սովյալների դեմ ղենք են գործադրում և սպանում ու վիրավորում են մոտ 70 և բանտարկում 206 մարդու։ Միայն ցարական զորքերի ու ոստիկանության գործադրած զենքի և դաժան ռեպրեսիաների միջոցով էր, որ փետրվարի 16-ին հաջողվում է հիմնականում ճնշել Բաքվի մասսաների հուզումները։

«Եվ ահա այդ ժամանակ,—ինչպես ասվում է Բաքվի բանվորների բողոքի մեջ,—երբ բոլոր խաչմերուկներում սպիտակին էին տալիս Բաքվում պատերազմական դրություն մտցնելու մասին հայտարարությունները, երբ ճնշողներն ստիպված էին քաղաքի մի մասից մյուս մասի վրա հարձակվել մեկ այստեղ, մեկ այնտեղ հանկարծակի բռնկվող հուզումները խեղդելու համար, երբ քաղաքը շարունակում էր ապրել լարված դրության մեջ, հայտնվեցին Բաքվի մարզային և Բալախանիի տեղական ռազմա-արդյունաբերական կոմիտեների լայնածավալ հայտարարությունները, որոնցում բանվորներին առաջարկվում էր նախընտրական ժողովներ կազմակերպել և որոշել պատվիրակների թեկնածուներին, իսկ երկու օր հետո էլ պատվիրակներ ուղարկել...։ Ավելի պարզ այդ

հայտարարությունները փակցվել էին փետրվարի 17-ին, իսկ բանվորական ժողովները նշանակված էին փետրվարի 19-ին և 21-ին»[5]։

Անհրաժեշտ է նշել, որ բանվորների պատվիրակների ընտրությունների կազմակերպման ու անցկացման ամբողջ գործը գտնվում էր ձեռնարկատերերի ձեռքում։ Բաքվի մարզային ռազմա-արդյունաբերական կոմիտեն 1916 թ. փետրվարի 15-ին Բաքվի քաղաքապետության շրջանի ձեռնարկատերերին և նրանց կառավարիչներին հայտնելով այն մասին, որ փետրվարի 19-ին նշանակված են Բաքվի մարզային և Բալախանիի տեղական ռազմա-արդյունաբերական կոմիտեներում բանվորների ներկայացուցիչներ ընտրողների, այսինքն՝ բանվորների պատվիրակների, նախընտրական, իսկ 21-ին՝ ընտրական ժողովները, պահանջում էր, որ նրանք «իրենց վրա վերցնեն այդ ընտրությունների կազմակերպման գործը»[16]։

Բաքվի բանվորները, բողոքելով ընտրությունների կազմակերպման և անցկացման հակադեմոկրատական այս քաղաքականության դեմ, պահանջում են հետաձգել ժողովների օրերը, որպեսզի գոնե ժամանակ ունենան համաձայնության գալու և որոշելու պատվիրակության իրենց թեկնածուներին։ Սակայն բանվորների այս արդարացի պահանջը չի բավարարվում։ Այսպես, օրինակ, երբ նրանք գիմում են Բալախանիի տեղական ռազմա-արդյունաբերական կոմիտեի նախագահ Նիկիտինին, պահանջելով գոնե մեկ շաբաթով երկարացնել պատվիրակների ընտրությունների ժամկետը, ապա Նիկիտինը բանվորներին լկտիաբար պատասխանում է, որ իրենք, այսինքն՝ Բաքվի կապիտալիստները պատվիրակների ընտրություններն արդեն ավարտված են համարում[17]։

Բաքվի արդյունաբերողներն ու ցարական ադմինիստրացիան է՛լ ավելի հեռու գնացին։ Վախենալով բոլշևիկների օրեցօր աճող հեղինակությունից և նրանց եռանդուն ռևոլյուցիոն գործունեությունից, նրանք բոլշևիկների նկատմամբ դիմեցին նոր ռեպրեսիաների։

1916 թ. փետրվարի 19-ի՝ լույս 20-ի դիշերը ցարական ոստիկանությունը խուզարկություններ է կատարում Բաքվի բոլշևիկյան կազմակերպության 28 ակտիվ գործիչների մոտ, ընդ որում 13 բոլշևիկների՝ Յ. Դ. Ջեվինին, Ն. Ն. Կոլեսնիկովային, Ա. Բ. Ռոխլինին, Պ. Ա. Բերիշվիլուն, Մ. Մ. Վարնաչովին, Ֆ. Ս. Դորոգովին, Վ. Ն. Գուբանովին, Ե. Ն. Կոզլովին, Ս. Ս. Կոմիսարովին, Մ. Մ. Կորյակինին, Ֆ. Ս. Կասյանովին, Մ. Տ. Մոսկվիտինին, Մ. Դ. Ստեպանովին խուզարկությունից հետո ձերբակալում և բանտ է նետում։ Սակայն ցարական ժանդարմերիան դրանով էլ չի բավարարվում։ Նրան դեռևս չէր հաջողվել իր ձեռքը գցել Կովկասի բոլշևիկների աննկուն ղեկավար, մեր պարտիայի ականավոր գործիչ Ս. Գ. Շահումյանին, որը ձերբակալությունից խուսափելու նպատակով Բաքվից ժամանակավորապես դրսի էր մեկնել։

Ցարական ժանդարմերիան կաշվից դուրս է գալիս, որպեսզի ձերբակալի Ս. Դ. Շահումյանին։ Եվ ահա 1916 թ. մարտի 7-ին նրան հաջողվում է Գրոզնիում ձերբակալել Ստ. Շահումյանին և անմիջապես տեղափոխել Բաքվի Բայիլովի № 2 բանտը։ Սակայն, գաղտնի կապեր հաստատելով բոլշևիկների հետ Ս. Գ. Շահումյանը մինչև 1916 թ. դեկտեմբերի 2-ը, մինչև աքսորվելը, շարունակում էր ղեկավարել պարտիական աշխատանքները Անդրկովկասում։

15 Մոսկվայի ԿՊՊԱ, ֆ. 102, 1916, գ. 5, մաս 6, թ. 2։

16 Տե՛ս «Кавказская копейка», № 46, 1916, 15 февраля.

17 Տե՛ս ՍՍՌՄ ՀՌ ԿՊԱ, ֆ. 102, Ա. Դ., Հ. Բ., 1916, գ. 347, հատոր 1, թ. 439.

Ցարական ադմինիստրացիայի կամայականությունները ու դաժան ռեպրեսիաները ոչ միայն չկարողացան ընկճել Բաքվի բանվորների կամքը, այլ ընդհակառակը՝ ուժեղացրին ցարական կառավարության, շահագործող դասակարգերի նկատմամբ նրանց տածած ատելությունը։ Նրանք իրենց բողոքի հուժկու ձայնը բարձրացրին բոլշևիկների ու առաջավոր բանվորների նկատմամբ ցարական իշխանության կիրառած այդ կամայականությունների ու ռեպրեսիաների դեմ։ Բաքվի բանվորները շատ լավ էին հասկանում, որ այդ միջոցով ցարական կառավարությունը ցանկանում է խափանել բոլշևիկների գործունեությունը Բաքվում և դրանով իսկ ազդել ռազմա-արդյունաբերական կոմիտեների «բանվորական խմբերի» ընտրությունների վրա։ Նրանք բացահայտորեն հայտարարում էին, որ ցարական ադմինիստրացիայի գործադրած ջանքերն ապարդյուն են։ «Արդեն այժմ կարելի է ասել,—հայտարարում էին իրենց բողոքի մեջ Բաքվի բանվորները,—որ ադմինիստրացիայի բոլոր ջանքերը ցանկալի արդյունքներ չեն տա։ Համաշխարհային պատերազմի մղձավանջով մասնատված և իր ձեռքից գնացող իշխանությունից ցաձգորեն կառչել շարունակող ռեակցիայի կամայականություններից կազմայուծված, բանվորները գիտեն, որ այն ժամանակ, երբ անհրաժեշտ է հակահարված տալ կյանքի շարդրսևորումներին, այլ ելք չկա քան կազմակերպված հակահարված տալը և ընտրությունները կանցնեն դեմոկրատիայի դրոշի ներքո»[18]։

Եվ իրոք, Բաքվի բանվորները բոլշևիկների գլխավորությամբ կազմակերպված հակահարված տվին պրոլետարիատի հետ «դասակարգային հաշտություն» հաստատելու բուրժուազիայի և սոցիալ-շովինիստների փորձին։ Սուրախանի բոլոր բանվորները, Բիբի-Հեյբաթի բանվորների երկու երրորդը, Բալախանիի բանվորների կեսից ավելին, ինչպես նաև մանր արդյունաբերության բանվորները, 1916 թ. փետրվարի 19-ի և 21-ի ընտրություններին չմասնակցեցին և համաքաղաքային ժողովի համար պատվիրակներ չընտրեցին[19]։

Կապիտալիստներին, ցարական ադմինիստրացիային և սոցիալ-շովինիստներին չօգնեց նաև Պետրոգրադի Կենտրոնական ռազմա-արդյունաբերական կոմիտեի «բանվորական խմբի» պարագլուխ, մենշևիկների լիդերներից մեկի՝ սոցիալ-դավաճան Գվոզդյովի Բաքու գալը։ Ճիշտ է, Գվոզդյովը ընտրությունների փոխարեն ընտրական խաղ կազմակերպելու, բանվորների իսկական կամքը կեղծելու, սոցիալ-դեմոկրատական ֆրազներ մատուցելու լավ փորձ էր ձեռք բերել դեռևս Պետրոգրադի ընտրությունների ժամանակ և կարող էր օգտակար լինել նաև Բաքվի պաշտպանողականների համար։ Սակայն պաշտպանողականների բլոկը շարաշար սխալվեց իր հաշիվներում։ Բաքվի արդյունաբերական շրջանի բանվորների բացարձակ մեծամասնությունն արդեն վաղուց երես էր թեքել մենշևիկներից և հատկապես դավաճան Գվոզդյովից, ուստի և նա չէր կարող արդարացնել ու շարդարացրեց պաշտպանողականների հույսերը։ Բաքվի պրոլետարիատը ամենևին չէր մտածում ռազմա-արդյունաբերական կոմիտեների մեջ մտնելով օգնել ցարիզմին և բուրժուազիային՝ շարունակելու իմպերիալիստական պատերազմը և խեղդելու Ռուսաստանի բանվորների և աշխատավոր մասսաների ռևոլյուցիոն շարժումը։ Ընդհակառակը, նա պատերազմական ծանր դրության պայմաններում, հետզհետե ուժեղացնում էր ցարական

---

18 Մոսկվայի ԿՊՊԱ, ֆ. 102, Ո. Դ., Հ. Բ., 1916, գ. 5, մաս 6, թ. 2։

19 Տե՛ս «Кавказская копейка», № 66, 1916, 6 марта.

ինքնակալության և թալանչիական պատերազմի դեմ մղվող իր հերոսական պայքարը։ Դրա փայլուն ապացույցն է հանդիսանում գործադուլային շարժման ծավալումը և ռազմա-արդյունաբերական կոմիտեներին կից «բանվորական խմբերիս ընտրությունների ձախողումը Բաքվում։

Այժմ տեսնենք, թե Բաքվի պրոլետարիատն ինչպես ձախողեց ռազմա-արդյունաբերական կոմիտեների «բանվորական խմբերի» ընտրությունները Բաքվում։

1916 թ. փետրվարի 28-ին, քաղաքային վարչության շենքում, խոշոր կապիտալիստ, Բաքվի նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի և մարզային ռազմա-արդյունաբերական կոմիտեի նախագահ Ա. Օ. Ղուկասովի նախագահությամբ տեղի ունեցավ Բաքվի մարզային և Բալախանիի տեղական ռազմա-արդյունաբերական կոմիտեների «բանվորական խմբերի» ընտրության համար հրավիրված Բաքվի քաղաքապետության շրջանի բանվորների պատվիրակների համաքաղաքային ժողովը։ Բացելով ժողովը, Ղուկասովը բանվորների պատվիրակներին ծանոթացնում է ռազմա-արդյունաբերական կոմիտեների կանոնադրության հետ և պահանջում է անմիջապես սկսել Բաքվի մարզային և Բալախանիի տեղական ռազմա-արդյունաբերական կոմիտեների «բանվորական խմբերի» համար նախատեսված 20 ներկայացուցիչների (յուրաքանչյուր կոմիտեում 10 ներկայացուցիչ) ընտրությունները։ Միաժամանակ Ղուկասովը հայտարարում է, որ ռազմա-արդյունաբերական կոմիտեների նկատմամբ բանվորների վերաբերմունքի հարցն արդեն դարձել է ժողովի քննարկման առարկա, որ ժողովում նախագահելու է ինքը և ոչ թե բանվորների ներկայացուցիչը։ Պատվիրակներն իրենց կայրությունն են արտահայտում Ղուկասովի այս անօրինականությունների դեմ և հայտարարում են, որ թույլ չեն տա, որ Ղուկասովները ոտնահարեն Բաքվի պրոլետարիատի քաղաքացիական տարրական իրավունքները։ Հետագա հետապնդումներից խուսափելու, ընտրությունների նկատմամբ իրենց վերաբերմունքի հարցը ազատ կերպով քննարկելու և ժողովը կազմակերպված կերպով ձախողելու համար, պատվիրակները պահանջում են, որ ժողովից հեռանան բուրժուազիայի, ոստիկանության ու ադմինիստրացիայի ներկայացուցիչները և նենց ինքը՝ ժողովի ինքնակոչ նախագահ, Բաքվի նավթարդյունաբերողների հայտնի պարազիտ Ա. Օ. Ղուկասովը։ Վախենալով բանվորների վճռական բողոքից ու ժողովի ձախողման վտանգից, Ղուկասովը հայտարարում է, որ համաձայն է ռազմա-արդյունաբերական կոմիտեներին բանվորների մասնակցության հարցի վերաբերյալ բացելու մտքերի փոխանակություն։ Սակայն պատվիրակները կտրականապես պահանջում են, որ նա անմիջապես հեռանա ժողովից։ Ղուկասովը ստիպված է լինում կատարել բանվորների պահանջը։ Ազատվելով բուրժուազիայի, ցարական ադմինիստրացիայի ներկայացուցիչներից և ընտրելով ժողովի իրենց նախագահին ու քարտուղարին, բանվորների պատվիրակներն անցնում են մտքերի փոխանակության։ Ավելի քան 2 ժամ տևող մտքերի փոխանակության ժամանակ նրանք իրենց վճռական բողոքն են արտահայտում ընտրությունների անօրինական անցկացման, ընտրությունների նախաձեռնությունը Բաքվի բոլշևիկյան կազմակերպության ակտիվ գործիչների ձերբակալման դեմ և պահանջում են՝ բանվորների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի ղեկավարությամբ կազմակերպել պատվիրակների նոր ընտրություններ և ազատել ձերբակալված բոլշևիկներին։ Այնուհետև ժողովը քննարկում և ընդունում է ռազ-

մա-արդյունաբերական կոմիտեներին բանվորների մասնակցության վերաբերյալ Բաքվի բոլշևիկյան կոմիտեի կազմած բանաձևի նախագիծը։

«Պատվիրակների ժողովը գտնում է,—ասվում է այդ բանաձևում,—որ Բաքվի մարզային և Բալախանիի տեղական ռազմա-արդյունաբերական կոմիտեներում բանվորների ներկայացուցիչներ ընտրողների, այսինքն՝ պատվիրակների ընտրությունները տեղի են ունեցել ապաղակող անօրինական ձևով։ Բանվորներին ստիպում էին կուրորեն (այսինքն՝ առանց հարցի քննարկման ու պարզաբանման—Հ. Պ.) ընտրել, ուստի և շատ բանվորներ հրաժարվեցին ընտրություններին մասնակցելուց ...Բաքվի ռազմա-արդյունաբերական կոմիտեն անհրաժեշտ չհամարեց ընտրական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար հրավիրել նույնիսկ արհեստակցական միությունների ներկայացուցիչներին։ Այս բոլորի և ադմինիստրացիայի կամայականության շնորհիվ, որը ընտրությունների նախօրյակին բանվորների ձերբակալություններ կատարեց, ընտրություններն ընթացան աննորմալ պայմաններում, որը Բաքվի ձեռնարկատերերին մեկ անգամ ևս հնարավորություն տվեց ծաղրելու Բաքվի բանվորների քաղաքացիական իրավունքները։ Հանդիսանալով բանվորների միայն մի մասի անօրինական ներկայացուցիչները, մենք ոչ մի դեպքում չենք կարող մեզ վրա վերցնել Բաքվի ողջ պրոլետարիատի ներկայացուցչությունը։ Այդ իսկ պատճառով, ամենավճռական ձևով բողոքելով ընտրությունների այդ կարգի դեմ և պահանջելով միջոցներ ձեռնարկել ձերբակալված բանվորներին անհապաղ ազատելու համար, մենք առաջարկում ենք. արդեն ընտրված պատվիրակներից ստեղծել բանվորական հանձնաժողով, որը արհեստակցական միությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հետաքննի անցկացված ընտրությունները, իսկ որտեղ ընտրությունները սխալ են կատարվել՝ անցկացնի նոր ընտրություններ և ավարտի ընտրություններն այնտեղ, որտեղ դրանք ամենևին չեն եղել»[20]։

Բանաձևն ընդունելուց հետո, ժողովի նախագահը ներս է հրավիրում Ղուկասովին և նրան հանձնելով վերոհիշյալ բանաձևը, ժողովը հայտարարում է փակված։ Բաքվի բանվորների պատվիրակներն, առանց որևէ ընտրության անմիջապես հեռանում են ժողովի նիստերի դահլիճից, դրանով իսկ ձախողելով Բաքվի մարզային և Բալախանիի տեղական ռազմա-արդյունաբերական կոմիտեների «բանվորական խմբերի» ընտրությունները։

Սակայն Բաքվի կապիտալիստներն ու սոցիալ-շովինիստները չհաշտվեցին իրենց կրած այդ խայտառակ պարտության հետ և որոշեցին ինչ գնով էլ լինի Բաքվի մարզային ռազմա-արդյունաբերական կոմիտեին կից ստեղծել «բանվորական խումբ»։ Այդ նպատակով նրանք 1916 թ. նոյեմբերի 13-ին նշանակեցին, դեռևս փետրվարին ընտրված, բանվորների պատվիրակների համաքաղաքային երկրորդ ժողովը։

1916 թ. հոկտեմբերի վերջերին և նոյեմբերի առաջին կեսին, ռազմա-արդյունաբերական կոմիտեների «բանվորական խմբերի» ընտրությունների շուրջը, բուրժուազիայի ու սոցիալ-շովինիստների բլոկի և բոլշևիկների միջև ծավալված պայքարը վերսկսվեց նոր ուժով։ Պայքարող երկու կողմերն էլ պատրաստվում էին նոյեմբերի 13-ին մի նոր ճակատամարտ տալու։ Պաշտպանողականների բլոկը կարծում էր, որ Ս. Գ. Շահումյանի և Բաքվի բոլշևիկյան կազմա-

20 Մոսկվայի ԿՊՊԱ, ֆ. 102, Ս. Գ., Հ. Բ., գ. 162, մաս. 7, թթ. 38—40։

կերպության մյուս ակտիվ գործիչների ձերբակալությունից հետո և բոլշևիկների ու առաջավոր բանվորների նկատմամբ անընդհատ ուժեղացող հալածանքների պայմաններում, նոյեմբերի 13-ի ընտրություններում ինքը կհաղթանակի։ Սակայն հենց սկզբից պետք է ասել, որ նրանք այս անգամ էլ սխալվեցին։ Ձերբակալությունից խուսափած Բաքվի բոլշևիկները մեծ եռանդով ու հաստատակամությամբ շարունակում էին պարտիական կազմակերպությունների ամրապնդումը և մասսաների մեջ տարվող իրենց ռևոլյուցիոն ագիտացիան։ 1916 թ. նոյեմբերին նրանց հաջողվում է Բալախանիում կայացած պարտիական ակտիվի գաղտնի ժողովում ընտրել բոլշևիկյան պարտիայի Բաքվի կոմիտեի նոր կազմ։ 1916 թ. նոյեմբերի 5-ի իրենց ժողովում բոլշևիկները քննարկում են Բաքվի պրոլետարիատի վաղուց արդեն նախապատրաստվող քաղաքական ընդհանուր գործադուլը կազմակերպելու և ռազմա-արդյունաբերական կոմիտեի «բանվորական խմբի» նոյեմբերի 13-ի ընտրությունները բոյկոտելու ուղղությամբ տարվող աշխատանքների վիճակը։ Բաքվի բանվորների պահանջները մշակելու համար ստեղծվում է հանձնաժողով։ Միաժամանակ որոշվում է կազմել բանվորների պատվիրակների նոյեմբերի 13-ի ժողովում արվող հայտարարության տեքստը[21]։

Այդ ժողովից երկու օր հետո, 1916 թվականի նոյեմբերի 7-ին, Թիֆլիսի դատական պալատի արդարացուցիչ վճռի համաձայն, բանտից ազատվում է Բաքվի բոլշևիկյան կազմակերպության ամենաակտիվ գործիչներից մեկը՝ Յ. Դ. Զեվինը, որն, ինչպես ասված է Բաքվի նահանգի ժանդարմական վարչության պետ գնդապետ Սեվերինովսկու զեկուցագրերից մեկում, բանտից դուրս գալու հենց առաջին իսկ օրերին, վերականգնելով պարտիական կապերը, կրկին եռանդուն գործունեություն է ծավալում Բաքվում[22]։ Բոլշևիկները Ի. Տ. Ֆիոլետովի և Յ. Դ. Զեվինի գլխավորությամբ, 1916 թ. նոյեմբերի 12-ին, այսինքն բանվորների պատվիրակների համաքաղաքային ժողովի հենց նախօրյակին, Բալախանիում կազմակերպում են արդյունաբերական 45 ֆիրմաների բանվորների ներկայացուցիչների գաղտնի ժողով։ Ժողովը քննարկելով Բաքվի մարզային ռազմա-արդյունաբերական կոմիտեի «բանվորական խմբի» նոյեմբերի 13-ի ընտրությունների հարցը, ընդունում է Յ. Դ. Զեվինի խմբագրած բանաձևի նախագիծը։

«Նավթարդյունաբերական տարբեր ֆիրմաների ներկայացուցիչների 45 մարդուց բաղկացած ժողովը,—ասվում է այդ բանաձևում,—քննարկելով Բաքվի ռազմա-արդյունաբերական կոմիտեին մասնակցելու հարցը, որոշում է. Ընդունելով... որ ռազմա-արդյունաբերական կոմիտեների դերը հենց պատերազմի կարիքների սպասարկմամբ և բուրժուազիայի իմպերիալիստական ձգտումների պաշտպանությամբ է որոշվում, խնդիրներ, որոնք անհամատեղելի են պրոլետարիատի շահերի հետ, նրա վերջնական նպատակի համար մղվող պայքարի հետ և, որ ուրիշ քաղաքների բանվորական խմբերն անցած ողջ գործունեությունը պրոլետարիատի և ընդհանրապես երկրի շահերին ամբողջությամբ վերցրած միայն վնաս է հասցնում և նկատի ունենալով այն, որ մինչև այժմ տեղի չեն ունեցել պատվիրակների ոչ վերընտրություններ և ոչ էլ լրացուցիչ ընտրություններ, ինչպես դա պահանջում էր պատվիրակների առաջին ժողովը,

21 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 2, գ. 4484, թ. 137։
22 Նույն տեղում։

գտնելով, որ պատվիրակների այդ ընտրությունները եղել են անօրինական... որ ոչ մի կամպանիա չի անցկացվել, որտեղ պրոլետարիատը կարողանար իր վերաբերմունքն արտահայտել պատերազմի ու ռազմա-արդյունաբերական կոմիտեների խնդիրների վերաբերյալ, այդ իսկ պատճառով պատվիրակների ժողովին մենք առաջարկում ենք՝ հրաժարվել ռազմա-արդյունաբերական կոմիտեում ներկայացուցիչներ ընտրելուց»[23]։

Բաքվի պատվիրակների բացարձակ մեծամասնությունը ճշտորեն կատարեց այս որոշումը։ 1916 թ. նոյեմբերի 13-ի ընտրական ժողովին 250 պատվիրակներից միայն 63-ը, այսինքն՝ բոլոր պատվիրակների միայն 25,2 տոկոսը, ներկայացան ժողովին։ Սակայն ժողովին մասնակցեցին միայն 39 հոգի (պատվիրակների 15,6 տոկոսը), որովհետև 24 պատվիրակներ, բողոք հայտնելով ժողովի անօրինական լինելու և նրան մասնակցող պատվիրակների անիրավազորության մասին, թողեցին և հեռացան ժողովի նիստերի դահլիճից[24]։

Պաշտպանողականները, տեսնելով, որ գործը լիովին տանուլ են տվել՝ «բանվորական խմբի» կեղծ ընտրություններ անցկացրեցին և Բաքվի մարզային ռազմա-արդյունաբերական կոմիտե ուղարկեցին 10 պաշտպանողականների՝ Ս. Ի. Կապիևիչին, Վ. Ի. Գլազիրինին, Ֆ. Պ. Վասիլևին, Վ. Պ. Օլշևսկուն, Գ. Կ. Սեմենիստովին, Վ. Ի. Սոչևին, Ֆ. Ի. Խապիլինին, Ն. Ա. Շևելյովին, Վ. Վ. Գրեզինին, Ի. Ֆ. Բուդանովին, Ա. Ֆ. Կորժիկովին և Ս. Վ. Դյակովին[25]։ Այսպիսով բուրժուազիայի ու սոցիալ-շովինիստների միացյալ բլոկին, միմիայն Բաքվի պրոլետարիատի բացարձակ մեծամասնության իսկական կամքը կեղծելու, կեղծ ընտրություններ անցկացնելու միջոցով էր, որ հաջողվեց Բաքվի ռազմա-արդյունաբերական կոմիտեին կից «բանվորական խումբ» ստեղծել։ Հետաքրքիր է, որ այս, մեծամասնությամբ մենշևիկներից բաղկացած, «բանվորական խմբի» գործունեությունն արտահայտվեց նրանում, որ նա ակտիվ պայքար ծավալեց հետզհետե աճող ու ուժեղացող Բաքվի պրոլետարիատի գործադուլային շարժման դեմ։ Մենշևիկները պրակտիկայում ևս մեկ անգամ ապացուցեցին, որ իրենք գործնականում բանվոր դասակարգի դավաճաններն են, բանվորական շարժման մեջ բուրժուազիայի գործակալներն ու նրա ազդեցության տարածողները։

Սակայն բանվորական շարժումը խաղաղեցնելու և բուրժուազիայի ազդեցությանը ենթարկելու նրանց բոլոր փորձերն ապարդյուն անցան։ Պատմության զարգացման օբյեկտիվ ընթացքը ցույց տվեց, որ ռազմա-արդյունաբերական կոմիտեների սոցիալ-շովինիստների դավաճանական քաղաքականությունը սնանկ և դատապարտված քաղաքականություն է։

Ռուսաստանի, այդ թվում նաև Անդրկովկասի տիրապետող դասակարգերը ցանկանում էին պատերազմի միջոցով ճնշել կամ գոնե թուլացնել բանվորական շարժումը, աշխատավոր բոլոր մասսաների ռևոլյուցիոն շարժումը։ Սակայն ստացվեց ճիշտ հակառակը։

Իմպերիալիստական պատերազմն ավելի ևս խորացնելով երկրի տնտեսական և քաղաքական ճգնաժամը, ծայր աստիճան սրելով կապիտալիզմի բոլոր հակասությունները, հանդիսացավ աշխատավոր մասսաների և մասնավորա-

---

23 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 2, գ. 4484, թ. 137.

24 Տե՛ս «История Коммунистической партии Азербайджана», стр. 229, Баку, 1958 г.

25 Տե՛ս «Кавказская копейка», № 318, 1916 18 ноября.

պես բանվորների ռևոլյուցիոնացման պրոցեսն արագացնող, ցարական ինքնակալության տապալումն արագացնող «ամենակարող ռեժիսորը»։

Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման միջնաբերդի՝ Բաքվի բազմազգ պրոլետարիատը, լենինյան պարտիայի գլխավորությամբ, տապալելով և դատապարտելով բանվորական շարժումը խաղաղեցնելու բուրժուազիայի և նրա գործակալների բոլոր փորձերը, է՛լ ավելի մեծ հաստատակամությամբ շարունակեց թալանչիական պատերազմի, ցարիզմի ու բուրժուազիայի դեմ մղվող իր հերոսական պայքարը։

Ռազմա-արդյունաբերական կոմիտեներում, «բանվորական խմբեր» ստեղծելու միջոցով, պրոլետարիատի հետ «դասակարգային հաշտություն» հաստատելու բուրժուազիայի և նրա գործակալների փորձերն, ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում, տապալվեցին այդ կոմիտեների ակտիվ բոյկոտի լենինյան տակտիկայի հետևողական կենսագործման շնորհիվ, բանվորական մասսաների մեջ բոլշևիկների կատարած հերոսական աշխատանքի շնորհիվ։